

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Օրգանիքս ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/26 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Changshu Tongrun Electronic Technology	Torun	4GBS-S	Changshu Tongrun Electronic Technology	1. Խցիկը 1.1. Չափսերը՝ 1800մմ (երկարություն) × 900մմ (բարձրություն) × 750մմ (լայնություն): 1.2. Նյութը՝ ամբողջությամբ չժանգոտվող պողպատ (Տիպ 304), հաստություն՝ 3մմ: 1.3. HEPA զտիչ՝ H13 դասից ոչ ցածր, ըստ EN1822, ≥99.95% արդյունավետությամբ: 1.4. Բուտիլային ռետինե ձեռնոցներ, հաստությունը՝ 0.4 մմ, ձեռնոցի անցքի տրամագիծը՝ 8 դյույմ, անողացված այլումինից դիմակայուն բացվածք՝ Ø220 մմ: 1.5. Դիտման պատուհան՝ թեքված ձևով,

8 մմ հաստությամբ անվտանգ
ամրապակյա ապակի, քերծակայուն,
քիմիական նյութերին դիմացկուն,
լավ լուսաթափանցմամբ:
Օգտագործվում է OMEGA
թափանցիկ օղակ՝ 3/8 դյույմ
հաստությամբ: 1.6. Կարող է պահել
դրական կամ բացասական ճնշում՝
-10 մբար-ից +10 մբար: 1.7.
Լուսավորություն՝ հակառեֆլեկտիվ,
խնայող լամպեր: 1.8. Ներսում
երկշերտ դարակներ: 1.9.
Բազմաբևեռ հոսանքի վահանակ՝
սնուցում 220V, 50Hz 1.10. Կարող է
համալրվել 5 հատ KF-40 ստանդարտ
միացմամբ: 1.11. Հերմետիկության
կորուստ՝ ≤ 0.001 ծավ./ժամում:
1.12. Պողպատե հենակ՝ շարժական
անիվներով, ընդհանուր
բարձրություն՝ 950մմ: 1.13. Բացվող
դիմապակի (Front Opening Window)
Դիմապակին բացվող է և
ապահովում է հերմետիկ փակման
հնարավորություն, բացման
անկյունը՝ 45° - 60° , հերմետիկացման
արտահոսքը՝ ≤ 0.001 ծավ./ժամ,
հերմետիկացումը ապահովում է
քիմիական նյութերին դիմացկուն
սիլիկոնային կամ ֆտորային

Էլաստոմերային միջադիրներով: 2. Տրանսֆեր խցիկը 2.1. Մեծ և փոքր փոխանցման խցիկներ՝ աջ կողմում:

2.1.1. Գլանաձև կառուցվածք՝ չժանգոտվող պողպատից (304), բռնակային կողպեքով: 2.1.2. Մեծ խցիկ՝ $\varnothing \geq 360$ մմ, երկարություն՝ ≥ 600 մմ, փայլեցված սահող սկուլտեղով; փոքր խցիկ՝ $\varnothing 150$ մմ, երկարություն՝ 300 մմ, ձեռքով կառավարվող փական: 2.1.3. Սկուլտեղ՝ շարժական, դուրսքաշվող:

2.1.4. Տրանսֆեր խցիկի հասանելի վակուում՝ ≤ 1 mbar, վակուումի ցուցադրությամբ: 3. Կառավարման համակարգ 3.1. Կառավարման, մոնիթորինգի և ավտոմատ կառավարման համակարգ Համակարգը PLC-ով կառավարվող է, հպագայուն էկրանով (touchscreen HMI), ապահովում է սարքավորման լիարժեք ավտոմատ կառավարում, մոնիթորինգ և պարամետրերի կարգավորում: Համակարգը ունի հետևյալ ֆունկցիոնալ հնարավորությունները. ինքնազննման (self-diagnostics) ֆունկցիա՝ սխալների հայտնաբերման և ցուցադրման

հնարավորությամբ; հոսանքի անջատումից հետո ավտոմատ վերագործարկման (auto-restart) ֆունկցիա՝ նախապես սահմանված պարամետրերի պահպանմամբ, աշխատանքային խցիկի ճնշման ավտոմատ վերահսկման և կարգավորման համակարգ, պարամետրերի ցուցադրում, ազդանշանների (alarm) կառավարում և օպերատորի միջամտության հնարավորություն հպագգայուն էկրանի միջոցով: Կառավարման համակարգը հիմնված է SIEMENS PLC և հպագգայուն HMI վրա 3.2. Ճնշման վերահսկում՝ կարգավորվող սահմանը՝ ± 12.5 մբար (արկղի ներսում՝ -1-ից +3 մբար): 12 մբար-ից բարձր անվտանգության փական բացվում է ինքնաբերաբար: 3.3. Կոճակ՝ ճնշման հարմար կառավարում: 4. Շրջանառության և մաքրման համակարգ 4.1. Ջրի և թթվածնի վերջնական մաքրության մակարդակ՝ $O_2 \leq 1$ ppm, $H_2O \leq 1$ ppm (դատարկ խցիկում, 20-25°C պայմաններում): 4.2. Վերականգնում՝ ամբողջովին

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Органикс ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕЧЧЧ-ЕУ&ԱՊՁԲ-26/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

ավտոմատ, 2.5 ժամ օդափոխում առանց օպերատորի: 4.3. Աշխատանքային գազը՝ He, N₂ կամ Ar: 4.4. Շրջանառման պոմպ՝ 0-100 մ³/h, փոփոխական արագությամբ: 4.5. Թթվածնի հեռացման կյուլը՝ BASF (Գերմանիա) արտադրության, քանակը՝ 6,5 կգ, կլանման հզորությունը՝ ≥63 լ/տր: Ջրի կլանող կյուլը (molecular sieve)՝ UOP (ԱՄՆ) արտադրության կամ համարժեք, քանակը՝ 6 կգ, հեռացման տեխնիկական հատկությունը ≥2.2 կգ: 4.6.

արտադրության կամ համարժեք, քանակը՝ 6 կգ, հեռացման տեխնիկական հատկությունը ≥2.2 կգ: 4.6.

Մաքրման փական. լիովին ավտոմատ էլեկտրա-պլեմատիկ փական: 4.7. Ֆիլտր. բարձր արդյունավետությամբ ֆիլտր՝ 0.3 միկրոն ծակոտիների չափի ֆիլտրով, որը համապատասխանում է HEPA ստանդարտներին: 4.8. Վերականգնում. Այն օգտագործվում է մաքրման համակարգը վերօգտագործելու համար՝ այն ակտիվացնելու համար. վերականգնումը պահանջում է հելիումի/H₂, ազոտի/H₂ կամ արգոնի/H₂ խառը գազ, որից H₂-ը կազմում է 10%-ը: 5. Ցուցադրման և կառավարման համակարգ •

Номер лота	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя
1				

Կառավարման և ցուցադրման համակարգը հիմնված է լինի SIEMENS PLC հպագգայուն էկրանով (touchscreen HMI) համակարգի վրա:

- Ինտերֆեյսի լեզուն՝ անգլերեն: 6. Խոնավության չափիչ խոնավության չափիչը՝ Vaisala (Ֆինլանդիա): Խոնավության չափիչը ապահովում է հետևյալ տեխնիկական բնութագրերը. • Չափման միջակայք՝ 0 - 1000 ppm (H₂O) • Չափման ճշտություն՝ ±1%, • Տվյալների ցուցադրում PLC համակարգի հպագգայուն էկրանին (touchscreen HMI), • Ահազանգի (alarm) սահմանման և կարգավորման հնարավորություն, • Շրջանառության (purification / circulation) համակարգի ավտոմատ կառավարման հնարավորություն՝ խոնավության մակարդակից կախված, • Աշխատանքային շրջակա միջավայրի ջերմաստիճան՝ -10°C-ից մինչև +50°C: 7. Թթվածնի չափիչ Թթվածնի չափիչը AVCRAY (ԱՄՆ) արտադրության է: Թթվածնի չափիչը ապահովում է հետևյալ տեխնիկական բնութագրերը. • Չափման միջակայք՝ 0 - 1000 ppm

(O₂), • Չափման ճշտություն՝ ±1%, • Սենսորի տիպ՝ էլեկտրաքիմիական (electrochemical sensor), • Բարձր զգայունություն և կայուն աշխատանք ցածր թթվածնի կոնցենտրացիաների դեպքում, • Փոքր արտահոսքի (low leakage) և նվազ կորոզիայի ռիսկ ունեցող կոնստրուկցիա, • PLC համակարգի հետ ինտեգրման և տվյալների ցուցադրման հնարավորություն հպազգայուն էկրանին, • Ահազանգի (alarm) սահմանման և ավտոմատ կառավարման համակարգին ազդանշան փոխանցելու հնարավորություն: 8. Վակուումային համակարգ Վակուումային համակարգը ներառում է վակուումային պոմպ՝ Edwards RV12 (Մեծ Բրիտանիա) արտադրության: Վակուումային պոմպը պետք է ապահովի հետևյալ նվազագույն տեխնիկական ցուցանիշները. • Հոսքը՝ »12 մ³/ժամ: • Վերջնական վակուումը՝ 2×10⁻³ մբար, • Ցածր աղմուկ և ցածր թրթռում: 9. Տուփի ավտոմատ մաքրում • Օգտագործողի կողմից սահմանված ժամանակի հիման վրա ավտոմատ

				<p>օդային մաքրում, կառավարում՝ հպագգայուն Էկրանից: 10. Կազմալուծող համակարգ օրգանական լուծիչների համար • Օրգանական լուծիչի ադսորբցիոն համակարգի լիցքավորման հնարավորությունը 7 կգ՝ ակտիվացված ածուխ և/կամ ակտիվացված ալյումինա: • Վերին և ստորին հատվածներում KF40 միացումներ՝ հեշտ լիցքավորման համար: 11. Աշխատանքային պայմաններ • Էլեկտրասնուցման լարում՝ AC 220±20%V, միաֆազ, 1.5±20% Kw: • Շրջապատի խոնավությունը՝ «75 %: • Գործառնական մակերես՝ 2600×1200մմ: 12. Արգոնի (Ar) բարձր ճնշման բալոն (սեղմված գազ), 40 լիտր, աշխատանքային ճնշում՝ մինչև 150 բար, համալրված երկաստիճան ճնշման կարգավորիչով (իներտ գազերի համար նախատեսված): 13. Սարքավորման մոնտաժ, տեղադրում և շահագործման հանձնում: Երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:</p>
--	--	--	--	--